1796

232.9
U-51

1884

ԱՄԷՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

ՔՐԻՍՏՈՍԻ ԳՈՐԾԱՒՈՐ

معارف عموميه نظارت جليله‌سنك رخصتيله
Հրամանաւ Մեարիֆի

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(ԱՐԱՄԵԱՆ)

1884

2010

232.9
Ք-51

ԱՀ

932.9
Ա-51

2001

ԱՄԷՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳՈՐԾԱՒՈՐ

Սիրելի ընթերցող, այս փոքրիկ տետրակը կարդալէ առաջ ներէ ինձ հետադայ մի քանի կարեւոր հարցումներն ուղղել քեզ։

Պօղոս առաքեալ կը սորվեցունէ թէ, եթէ մարդ մը կը կոչէ զինք Քրիստոնեայ և չունի Քրիստոսի հոգին, անորը չէ (Հռոմ. Ը. 9)։ Կը յորդորէ Հռոմի Քրիստոնեաներն հագնիլ զՔրիստոս (Հռոմ. ԺԳ. 14)։ Եւ Կողոսացւոց թղթոյն մէջ (Գ. 3) կ'ըսէ թէ, Քրիստոնէին հոգեւոր կեանքը պահուած է Քրիստոսով յԱստուած։ Ուստի կը հարցունեմ, կը դաւանիս թէ Քրիստոնեայ ես, և Քրիստոսի և անոր եկեղեցւոյն ծառայ։ Ունիս Քրիստոսի հոգին։ Հագած ես զՔրիստոս։ Քրիստոս կ'ապրի ի քեզ։ Կեան-

քեզ Քրիստոսով պահուած է յԱստուած։

Այս հարցմունք, թէպէտ կը թուին տարբեր, ունին սակայն նոյն իմաստը։

Մեծագոյն գործոցն Աստուած է։ Աստուծոյ սրդիներն ստեղծուած են անոր պատկերին և նմանութեանը պէս, ուրեմն անոնց բնութիւնը և փափաքն է բարի գործել։ Յիսուս ըսաւ Հրէից. «Իմ Հայրս մինչեւ ցայժմ կը գործէ, ես ևս կը գործեմ։ (Յով. Ե. 17)։ Ուրեմն ով որ Յիսուսի հոգին ունի անոր նման պիտի գործէ։ Արդ յանուն Քրիստոսի կը հարցունեմ քեզ, Քրիստոսի գործա՞ւոր ես։

Սիրելի ընթերցող, այս հարցումը կ'ընեմ քեզ իբրև բարեկամ, ուստի ներէ ինձ։ Եթէ չես Քրիստոսի գործաւոր, չես Քրիստոնեայ, չես հաւատարիմ ծառայ Քրիստոսի և անոր եկեղեցւոյն, չընակիր ի քեզ Քրիստոսի հոգին, հաղած չես զՔրիստոս, Քրիստոս չապրիր ի քեզ, եւ քու կեանքդ Քրիստոսիս պատուած չէ յԱստուած։

ՀՍՍՀ Գրքերի Պետական Գրադարան
Գրքերի Պետական Գրադարան
Ա. Մասնաճյուղ
Ա. Մասնաճյուղ
ՀՍՍՀ ԳՊԳ
38561-67

Ոչ ես, այլ Տէրը կ'ըսէ ասոնք. «Ամէն բարի ծառ,» կ'ըսէ, «բարի պտուղ կու տայ ... ուրեմն անոնց պտղէն պիտի ճանչնաք զանոնք» (Մատ. Է. 17, 20)։

Թերևս դեռ չափահաս չես, բայց եթէ բաւական մեծ ես զՔրիստոս ճանաչելու, բաւական մեծ ես նաև սիրել զՔրիստոս և ծառայել նմա։ Եթէ ոք չունչ չառնուր, կ'ըսենք թէ մեռած է, վասն զի չունչ առնուլն է նշան կենդանութեան։ Եթէ սէրը չը գործեր, մեռեալ է, զի սիրոյ չունչն է գործել։ Որչափ սէր ունիս նոյնչափ պիտի ըլլայ անոր արդիւնքը, եթէ շատ սէր՝ նաև շատ արդիւնք, և այնպիսի արդիւնք զոր Աստուած կը պահանջէ։ Երբ Տէրն մեր Յիսուս երկոտասանամեայ էր, ըսաւ իւր սիրելի ծնողաց ի տաճարին. «Չգիտէք թէ պարտ է ինձ իմ Հօրս տունն (կամ գործերուն մէջ) ըլլալ» (Ղուկ. Բ. 49)։ Անտարակոյս Յիսուս արդէն իւր Հօրը գործին մէջ էր։

5247-Կ.Հ.

Թերեւս ըսես. «Յիսուս Աստուած եւ մարդ էր եւ կարող էր կատարել ինչ որ հաճոյ թուէր նմա. բայց ես որ փոքրիկ տղայ եմ, չեմ կարող վիճաբանիլ մեծ եւ գիտուն մարդոց հետ, եւ ոչ կատարել անոր հրաշալի գործերէն մին. արդարեւ կամաւ կը ծառայէի նմա եւ անոր եկեղեցւոյն, եթէ ունենայի մանաւոր տաղանդ եւ շնորհք զոր իմ ծանօթներէս շատերն ունին: Ուրախութեամբ կ'ուսանիմ անոնցմէ, բայց ուսուցանել անոնց չեմ կարող, ինչ կրնամ ընել:»

Կը խնդրեմ, ազնիւ ընթերցող, որ ուշադրութեամբ կարդաս սա փոքրիկ պատմութիւնը.

Մարդ մը իւր ագարակին համար մշակ վարձելու ելաւ ի հրապարակ. հոն գտաւ պատանի մը եւ հարցուց անոր. «Ինչո՞ւ ծոյլ կը կենաս հոս օրն ի բուն:»

Պատանին պատասխանեց. «Քանզի ոչ ոք վարձեց զիս:» Մարդն ըսաւ. «Ուրեմն գնա եւ գործէ իմ ագարակս

մէջ, եւ ինչ որ արժան է պիտի տրուի քեզ:» «Բայց ես մեծ չեմ, չունիմ բաւական զօրութիւն արօրը վարելու,» պատասխանեց պատանին: «Բարի», ըսաւ մարդը, «բայց կարող ես վարել ձիերը, ցանել սերմ, ժողվել քարերը, եւ քաղել անպիտան խոտերը:»

Աստուծոյ գործերն այնպէս տարբեր տարբեր են, որ չկայ չափահաս մարդ, պատանի եւ ոչ իսկ փոքրիկ տղայ որոց համար յարմար գործ չըլլայ ըստ հասակի եւ կարողութեան:

Եթէ գտած չես քեզի յարմար գործ, պատճառն այս է որ տակաւին գտած չես զԱստուած բոլորովին: Կը հաւատաս ինչ որ կ'ըսէ Սուրբ գիրք Աստուծոյ զօրութեան եւ իմաստութեանը վրայ: Կը հաւատաս նաեւ թէ նա ստեղծած եւ զարդարած է զմարդիկ պէսպէս յատկութիւններով, նախասահմանելով իւրաքանչիւրին դերքը եւ յատուկ գործը: Կրնաս այսպիսի հոգեւոր ճըշմարտութեանց հաւատալ, բայց եւ այնպէս անարգել զԱստուած եւ Ջա-

սել հոգւոյդ, եթէ չճանչնաս թէ Աստուած ընդ քեզ է ամէն ժամ և ամէն բոպէ։

«Բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,» ըսաւ Սաղմոսերգուն, «ահա, ով Տէր դուն ամենը գիտես։» Հաւատա՛ որ Յիսուս Էմմանուէլ քեզի հետ է և պատրաստ է օգնել քեզ կարօտութեան ժամանակ։ Հաւատա ամենուրեք Աստուծոյ և գիտցիր թէ ոչ ինչ կը վրիպի անոր սուրբ աչքէն։ Ցաչս Աստուծոյ մեծ կամ փոքր գործ՝ սիրոյ կապով աւելի կամ նուազ կապեալ գործեր են։ Եթէ հաւատաս այս ճշմարտութեան, պիտի բացուին աչուքներդ և կարող պիտի ըլլաս քաջ ճանչնալ քու սեպհական գործդ։ Յիշէ զՅիսուս ի ճաշ հրաւիրող Սիմոնը և մեղաւոր կինը։ Սիմոն էր փարիսեցի և թերեւս մեծ մարդ էր իւր շրջանին մէջ, բայց աւա՜ղ որ Յիսուսի թերի ծառան էր. մոռցաւ ջուր և ղենջակ և համբոյր մատուցանել Յիսուսի։ Բայց մեղաւոր կինը, թէպէտ և

աղքատ էր, լուաց Քրիստոսի ոտքն արտասուօք և սրբեց մազերովը, և անոր սիրոյն այս նշանը՝ շատ հաճոյ եղաւ Յիսուսի։

Սուրբ գիրքը մոռդրութեամբ կարդալով պիտի տեսնես թէ մեծ մեղաւոր ես, և թէ Յիսուս մեծ Փրկիչ է որ կ'աղատէ դքեզ քու բոլոր մեղքերէդ, և կը փոխէ դքեզ անոր նմանութեանը, անատեն շատ պիտի սիրես զնա, և այս անճառելի սէրը պիտի բանայ քու հոգւոյդ աչքը, և պիտի դանես քու յատուկ գործդ ամէն տեղ։ Բայց պիտի ըսես, «Կ'ընդունիմ ինչ որ կ'ըսես, գիտեմ նաև թէ աւելի յառաջ երթալով, լաւ ես պիտի ճանչնամ այս ճշմարտութիւնները, կը փափաքիմ սակայն որ ցուցնես ինձ թէ ինչպէս կրնամ աւելի գործել Յիսուսի համար այժմու վիճակիս մէջ։»

Դուն ընտանիքի մը անդամ ես. գիտցիր թէ ամէն Քրիստոնեայ ընտանիք Քրիստոսէ հաստատուած դպրոց է. ծնողք են այն դպրոցին ուսու-

ցիչները, և գիտես թէ ուսուցիչք կարօտ են միշտ աշակերտաց ձեռնտուութեանը։ Արդ դու այս աշակերտներէն մին ես, երբ կ'արթննաս առաւօտուն, առ Աստուած գոհութիւն և փառաբանութիւն մատուցանելէ ետքը բարեաց համար զորս վայելեցիր այն գիշեր, աղօթէ այսպէս. «Ով սիրելի Տէր իմ Յիսուս, ցուցուր ինձ այս օրուան պարտքս, ցուցուր ինձ բեռը զոր պիտի կրեմ այսօր. զօրացո՛ւր զիս որ այս օրուան հոգերս և դժուարութիւններս համբերութեամբ տանիմ. շնորհէ որ ըլլամ օգնական ծընողացս, աջակից և մխիթարիչ եղբարցս և քոյրերուս, և օրհնութիւն անոնց որք շուրջ են զինև։ Ով Տէր Յիսուս, տուր որ զիս ճանչցողները, երբ զիս կը յիշեն, պատճառ ունենան գովել և փառաբանել զքեզ։»

Դարձեալ այս գործին համար նուիրէ քու բոլոր զօրութիւնդ, և ինչ որ կ'ընես՝ ըրէ Քրիստոսի համար։ Գիտնալով թէ Քրիստոս ներկայ է միշտ և

գիտէ քու ամէն գործդ, խօսքդ և խորհուրդդ։ Հաւատա նաև թէ քու ամէն խօսքդ, խորհուրդդ և զգացումդ և գործդ զոր Յիսուսի սիրոյն և անմահ հոգւոյ փրկութեանը համար կ'ընես, հաճելի է անոր և թէ հաւատարիմ ծառայ պիտի համարինա զքեզ անոնց համար։

Թերևս կ'ըսես՝. «Այսպիսի խրատու անսալ բարի է և օգտակար, եթէ կարենայի հաւատալ թէ գործերս հաճոյ են Աստուծոյ։ Բայց, աւա՜ղ, գործերս, խորհուրդներս, զգացումներս և խօսքերս այնչափ թերի են, որ ես իսկ չեմ հաճիր անոնց, թող թէ ամենակալն Աստուած։ Արդ կը հարցընեմ քեզ, սիրելիս, անկեղծութեամբ ջանացի՞ր կատարել գործդ հաւատարմաբար և եռանդագին, և այն ի փառս Աստուծոյ։ Պիտի պատասխանես. «Այո, որչափ որ գիտեմ կարող եմ ըսել ստուգիւ թէ ջանացած եմ, բայց թերևս բանով մը պակաս ըլլամ յանդէտս։»

Աղնիւ ընթերցող, գիտցիր որ Աստուած քեզի հետ կը վարուի իբրեւ իմացական էակի հետ։ Գիտէ թէ քու բոլոր խորհուրդներդ, զգացումներդ ու գիտակցութիւնդ կրնան ըլլալ թերի, և եթէ կը զգաս թէ կ'ուզես ընել ինչ որ հաճոյ է Աստուծոյ և ինչ որ Անոր փառացը համար է, այնուհետև պատճառ չունիս մերժելու զգացմանդ վկայութիւնը ըսելով, «Թերևս բան ով մը պակաս ըլլամ։» Վասն զի եթէ այսպէս ըսելով կը մերժես զգացմանդ վկայութիւնը, իրաւունք կու տաս այն յանդուգն անձանց որ կ'ըսեն. «Ո՞վ կրնայ գիտնալ թէ ինչ գործ հաճոյ է Աստուծոյ։»

Արդ, դարձեալ դառնանք մեր խնդրոյն թէ, եթէ ոք անկեղծութեամբ կը ջանայ հաւատարմաբար կատարել իւր պարտիքն առ Աստուած, այսպիսի հնազանդութիւն մը թէև թերի ըլլայ, հաճոյ է Աստուծոյ։ Զոր օրինակ, եթէ ծերոջը տունը երթաս երկրպագութիւն մատուցանելու Աստուծոյ և հոգևոր հրահանգ ընդունելու, հաճոյ է Աստուծոյ. նոյնպէս եթէ ջանաս հոգևոր ազդեցութիւն բանեցունել բարեկամացդ վրայ, հրաւիրել զանոնք Յիսուսի փրկաւէտ Աւետարանին, եթէ այս նպատակաւ տաս անոնց Սուրբ գիրք, օգտակար տետրակ և ասոնց նման ինչ ինչ գործեր ընես, հաճոյ է Աստուծոյ։ Նաև ջանալ նուաճել լեզուդ, ապրիլ ժուժկալութեամբ, մաքրել խորհուրդներդ, ուղղել զգացումներդ և նախապաշարումներդ, այլովքն հանդերձ, և ըստուգիւ բերելու համար զմարդիկ առ Քրիստոս, արդարև հաճոյ և ընդունելի է Աստուծոյ։ Ահա առաքելոյն պատուէրը. «Մեզմէ ամէն մէկը շինութեան համար իր ընկերին հաճոյ ըլլայ բարի բաներու մէջ.» Հռովմ. ԺԵ. 2)։ Պատուէր մը զոր եթէ շարունակ կատարէ ոք, կը դանէ յարմար և վայելուչ գործ իւր բոլոր կենաց մէջ։

Այս պատուէրը կատարել թերևս

հակառակի երբեմն քու ճաշակիդ, և պահանջէ մեծ ջանք և զոհողութիւն, բայց կրնաս զօրանալ և քաջալերուիլ, եթէ խորհիս թէ քու գլխաւոր փափաքդ է նմանիլ Քրիստոսի, որ «ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ։»

Այժմ առթի մէջ ընկերներուդ և ծանօթներուդ բարիք ընելու ջանալով կ'ունենաս անոնց վրայ Քրիստոնէավայել ազդեցութիւն, և այս մեծապէս կը նպաստէ զանոնք բերելու Քրիստոսի։ Գրուած է. «Բոլոր օրէնքը այս մէկ խօսքին մէջ կը կատարուի թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» (Գաղ. Ե. 14)։ Եթէ ունիս փափաք կատարելու այս պատուէրը, առիթ կ'ըլլայ քեզ յիշելու նաև սա պատուէրը, «Իրարու նեղութիւնները կրեցէք, ու անանկ Քրիստոսի օրէնքը կատարեցէք» (Գաղ. Զ. 2)։ Արդարև այն որ կը կրէ իւր ընկերին նեղութիւնները, կը ցուցնէ թէ ունի այն սէրը որ կը պահանջուի։

Աղնիւ բարեկամ, երբև որդի Աստուծոյ և հաւատարիմ ծառայ Քրիստոսի ջանալ քալելը քու բարձր կոչմանդ համեմատ, մեծ և տեւական գործ մը պիտի ըլլայ բոլոր կենացդ մէջ։ Պօղոս առաքեալ Եփեսացւոց թղթոյն մէջ կ'ըսէ. «Արդ Աստուծոյ նմանող եղիք սիրելի զաւակներու պէս և սիրով վարուեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ մեզ սիրեց, ու իր անձը մեզի համար մատնեց անուշահոտ պատարագու զոհ ըլլալու Աստուծոյ» (Եփես. Ե. 1, 2)։ Եթէ այս Աստուածային հրամանը ջանաս ի գործ դնել, փորձով պիտի գիտնաս թէ ինչ է այն երկնային պատուէրը զոր Պօղոս կու տայ Կորնթացւոց. «Թէ ուտէք, թէ խմէք և թէ ինչ գործ որ ընէք ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք» (Ա. Կորնթ. Ժ. 31)։

Կը ճանչնամ Քրիստոնեայ մը հասարակ դպրոցի մէջ միայն կրթուած, որ քրտամբ երեսաց կը հայթայթէ իւր հանապազորդ պէտքը, բայց և այնպէս ջերմ սիրովը զոր ունի առ Քրիս-

տոս՝ այն ծանր աշխատութեան մէջ անգամ կը գտնէ պատեհութիւն ծառայելու Տէրոջը։ Այս աղնիւ Քրիստոնեան սովոր է խօսիլ ամէն օր մարդոց անոնց հոգեւոր վիճակին և Յիսուսի անճառելի սիրոյն վրայ։ Զոր օրինակ, երբ կը հանդիպի բարեկամի մը, հարցունելէն ետքը անոր որպիսութիւնն ըստ սովորութեան, կ'ըսէ, «Եղբայր, աղօթասէր ես։» Եթէ ճամբան հանդիպի ուրիշի մը որ կը փնտռէ այս ինչ կամ այն ինչ փողոցը, կ'առաջնորդէ անոր, և այս առթիւ կը հարցունէ, «Եղբայր, դտա՞ծ ես Քրիստոսի ճամբան։» Եւ եթէ պատասխան ընդունի թէ «Ոչ,» կը ցուցնէ անոր թէ ինչ է Քրիստոսի ճամբան։

Այս Քրիստոսասէր անձը օր մը կը խօսէր բարեկամի մը անոր անմահ հոգւոյն վրայ. մարդը շատ օգտելով այս խօսակցութենէն, ըսաւ անոր, «Շնորհակալեմ քենէ, սիրելի եղբայր, առաջին մարդը եղար որպիսի խօսակցութիւն մը ըրիր ինծի հետ։»

Հռչակաւոր դատաւոր մը անգամ մը իւր Քրիստոնեայ բարեկամներէն միոյն ըսաւ. «Զաւակներուս ծնանելէն հետէ, ջանացած եմ անոնց վրայ քրիստոնէական ազդեցութիւն բանեցունել, բայց ահա դուն վեց շաբթուան մէջ քան զիս աւելի ազդեցութիւն բանեցուցիր զաւակներուս վրայ, արդ կ'աղաչեմ ըսէ ինծի ի՞նչ է ասոր գաղտնիքը։» «Ոչ այլ ինչ է,» ըսաւ միւսը, «եթէ ոչ Յիսուսի սէրը. այս սիրոյն վրայ բան մը գիտե՞ս։» Դատաւորը խոստովանեցաւ թէ այն սիրոյն վրայ բան չէր գիտէր։ Արդարև գիտէր բաղում ինչ. ունէր մեծ ազդեցութիւն քաղաքական խնդրոց մէջ, բայց, աւաղ, զուրկ էր այն ճշմարիտ գիտութենէն, ոգէտ էր բոլորովին Յիսուսի անճառելի սիրոյն, անծանօթ էր անոր այն զօրութիւնը որ յառաջ կու գայ այն սէրէն զոր մարդիկ ունին Քրիստոսի վրայ։ Եւ ահա այս էր պատճառն որ նա ազդեցութիւն չունէր իւր զաւակաց վրայ։

Սիրելի ընթերցող, եթէ ունիս այս սքանչելի սիրոյ կայծը քու հոգւոյդ մէջ, պատրաստ գործ պիտի գտնես քեզ ամէն տեղ։ Երբ մարդ մը հարցուց Քրիստոսի հռչակաւոր պաշտօնեային, Ամերիկացի Լայմէն Պիչըրի, «Ինծի համար քարոզչութեան տեղ մը կա՞յ,» «Ցե՛ղ,» ըսաւ Լայմէն Պիչըր, «ամէն տեղ քարոզչութեան տեղ է։» Ա. յսինքն ըսել ուզեց, «Եթէ կամք ունիս գործելու, ամէն տեղ գործ կայ։» Յիսուսի սիրովը բորբոքեալ սրտի մը առջև բոլոր աշխարհ գործելու տեղ է, և ով որ ունի այսպիսի սիրտ, ամէն տեղ կը գտնէ պատեհութիւն գործելու։ Եռանդուն սէրը, կէս օրուան արեգական պէս, կը թափանցէ մթագոյն և տիրագոյն տեղերը, և կը դըտնէ գործ. բայց ով որ զուրկ է այս սիրոյ կայծէն՝ ո և իցէ տեղ չգտներ գործ։

Ամէն դերք զոր կը կարդաս՝ կրնայ օգնել քեզ Յիսուսի գործին մէջ. ըսել չեմ ուզեր թէ կրօնական գրքերը

Գրքերի Գոս. Գրքերի Գոս. Գրքերի
Գոս. Գրքերի
ՀՍՍՌ-Արմ.ՍՍՌ
Ա. Մասեր. Մատենադարան

միայն կարդաս։ Գիտութեան ամէն ճիւղին մէջ կրնաս գտնել Քրիստոսի գործին նպաստող բան։ Աստուծոյ բնական գործերը լի են հոգևոր հըրահանգօք, որ այնչափ շատ են, որչափ պատուական քարեր հանքերու մէջ. ուրիշ բան պէտք չէ բայց աշխատիլ զանոնք հանելու։

Սիրելի ընթերցող, այս տետրակը մէկդի դնելէ առաջ խորհէ, հարցուր խղճիդ, և խիղճդ թող պատասխանէ. Յիսուսի համար կը գործես. կեանքդ նուիրած ես անոր որ սիրեց զքեզ անհուն սիրով։ Եթէ նուիրած չես կեանքդ, նուիրէ խսկոյն. եթէ նուիրած ես, նորոգէ ուխտդ։ Թող քու նշանաբանդ ըլլայ օգտակար ըլլալ աշխարհի։ «Նախանձաւոր եղիք այն շնորհքներուն որ լաւագոյն են» (Ա. Կորնթ. ԺԲ. 31)։

Բայց պիտի ըսես, «Ի՞նչպէս գիտնամ թէ որո՞նք են լաւագոյն շնորհք։» Ասոր պատասխանը կը գտնես Յիսուսի սքանչելի և անղուգական կենաց մէջ։

Ա. 8

Անոր անձնուրաց պաշտօնեան Պօղոս այսպէս կ'ըսէ առ Եփեսացիս. «Այն բան ցուցուցի, թէ ասանկ պէտք է աշխատիլ և տկարներուն օգնութիւն ընել և միտք բերել Տեառն Յիսուսի խօսքը զոր ինքը ըսաւ, «Երանելի է տալն քան առնուլն։»

Այն որ «Քրիստոս հագած է» երբէք չդանդաղիր, այլ կը կենայ անյողդողդ կենաց բոլոր պարագաներուն մէջ իբրև եռանդուն գործաւոր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

1796

ՀՀ Ազգային գրադարան
NL0028677

143